ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԵՆ· ԿՈՄՈՒՆԻՍՏ· ՅԵՐԻՏ· ՄԻՈՒԹՅՈՒՆ

355.5
Գ-68

# ԳՅՈՒՂԻ ՀՐԱՁԳԱՅԻՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
ՀԼԿԵՄ. Կ. Կ.-ի կից Ռազֆիզսեֆ հանձնաժողովի

ԵՐԵՎԱՆ — 1928

355.5
Գ-68
01 MAR 2010

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
Հայաստանի Լ. Կ. Ե. Մ. Կենտ. Կոմիտեի կից
Ռազմֆիզկուլտսեժ հանձնաժողովի

# ԳՅՈՒՂԻ ՀՐԱՁԳԱՅԻՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ
# ԾՐԱԳԻՐ

---

ԵՐԵՎԱՆ — 1928

20.03.2013

42.159

Գրառեպվար 545 բ. Տիրաժ 1000

Պետհրատի յերկրորդ տպարան Յերևանում—143

# ԳՅՈՒՂԻ ՀՐԱՁԻԳԱՅԻՆ ԽՄԲԱԿՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

ԾՐԱԳՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿՆ Ե.— Ներշնչել խմբակայիններին հետաքրքրություն հրաձիգային գործի նկատմամբ, տալ հիմնական հասկացողություններ և հրաձիգային գլխավոր փորձառություններ։ Սրանով հեշտանում ե խմբակի անդամի հետագայում հրաձիգային գործի անցնելը։

Խմբակի անդամների թիվը համապատասխան պետք ե լինի փորձառու ղեկավարների թվին։ (Մեկական 7—9 մարդու համար)։

Հրաձգությունը, մարտական փամփուշտների դժվար ստանալու հետևանքով, կատարվում ե մեծ մասամբ սաչմաններով ի հարկե, այն, դեպքում, յեթե չի հաջողվել ճարել քիչ լից ունեցող փամփուշտներ կամ քիչ տրամաչափ ունեցող զենք՝ կարելի յե մարտական փամփուշտներով հրաձգություն կատարել ոտար հրացաններից, սակայն այդ մասամբ կապված ե նրանց կազմությունն ու ձգարանական հատկությունների չիմանալու անհարմարության հետ։

Հրաձգությունը պետք ե կատարվի ղեկավարի մշտական դիտողության տակ։

Պարապմունքների սկզբին խմբի յուրաքանչյուր անդամին տրվում ե հրաձիգային գրքույկ (թերևս հասարակ տետրի ձևով), ուր ղեկավարը նշանակում ե հրաձիգի ունեցած հաջողությունների հետևանքը։

Գրքույկում (տետրի մեջ) պետք ե լինեն նշանների նկարները, վորոնց վրա, յուրաքանչյուր հրաձգությունից հետո, ղեկավարը նշանակում ե, ճշտությամբ, գնդակների դիպած տեղերը։

Նույն տեղ, ամեն մի պարապմունքից հետո ղեկավարը անում ե նաև իր դիտողությունները։

Ուսումնասիրության հետևանքները ղեկավարի համար ուսուցման ընթացքում, ղեկավարման հիմք են ծառայելու։

Սենյակային ձգարանի (ТИР.) համար ընտրվում ե մեկ կամ յերկու կից սենյակներից բաղկացած մի բընակարան (նրանց մեջի լայն դռնով)։ Նշանների մոտի պատը այնքան ամուր պիտի լինի, վոր նույն իսկ քիչ լից ունեցող փամփուշտով կրակելու դեպքում գնդակը չկարողանա ծակել։ Վորպես զի պատը չփչանա պետք ե նրան ծածկել ամուր տախտակներով։

Մարտական փամփուշտներով կրակելու համար տիրում պետք ե լինեն տեղափոխվող կամ կախովի փայտե տախտակամածներ (110×10 սանտիմետր) թղթե նշաններ կպցնելու, հրացաններ, ռազմամթերք, սոսինձ, մեխեր, քոփոծք և այլն։

Այս բոլորին կարող ե հետևել ղեկավարի օգնականը այս բոլորը պահվում ե հարմարվելով տեղական պայմաններին։



## ԾՐԱԳԻՐ ՅԵՎ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

### 1-ին պարապմունք

### Մեր հրացանը

ԾՐԱԳԻՐ.— Հրացանի նշանակությունն ու վորակը. Նրա կազմությունն ու գլխավոր մասերը։ Ինչպես ե հրացանը աշխատում։

ՁԵՌՆԱՐԿՆԵՐ.— Ժամանակավոր հրաձիգային կանոնադրության I-ին մասը. Հրացան 1891 թ. տեսակի։ **Մեթոդական ցուցմունքներ.**— Թելադրող հարցերով ձգտեցեք պատասխան ստանալ հրացանի մասին (կրակել և ծակել)։ Տվեք հրացանը մեկն ու մեկի ձեռը և հարցրեք. «Ինչքան նաքաշ ունի ստացեք ըստ կարելվույն ուղիղ պատասխան. պարզեցեք, վորոշեք հրացանի տրամագիծըն ու յերկարությունը։ Բացատրեցեք՝ ինչ ե տրաչափը և քանի տրամաչափանի յե մեր հրացանը։

Անցնելով հրացանի գլխավոր հատկությունների և վորակի ուսումնասիրության՝ հարցրեք. «Ո՞վ ամենից արագ ե շարժվում», ընտրեցեք հարցերի միջոցով ամենից արագ շարժումը, որինակ. սավառնակ. (այերոպլան) հարցրեք. «Գնդակը նրանից արագ ե թռչում»։ Յերբ կարտահայտվեն, համեմատեցեք սավառնակի արագությունը (3—5 րոպ. մեկ վերստ) գնդակի արագության հետ (մեկ վայրկյան մեկ վերստ) դրան հարակից բացատրեք, ինչու չպետք ե «խոնարհվել» գնդակին։

Գնդակի թռիչքի հեռահասությունը. Համեմատեցեք վորսորդական հրացանի հեռահասության հետ։ Ընդգծելով մեր հրացանի առավելությունները։

Միևնույն վոգով, օրինակներով, բացատրեցեք հրացանի ամրությունը, նրա հարվածի ճշտությունը, ուժը և այլն...

Գնդակի թռիչքի ուժի վորոշման ժամանակ օգտակար է թելադրող հարցերով իմանալ ձյունի (փայտի, հողի) դիմադրելը գնդակին։

Եզրափակման մեջ համոզեցեք լսողներին, վոր հրացանը փորձված, կարող ձեռներում,— սարսափելի զենք է։

Բերեք մի քանի օրինակներ ձեր մարտական կամ ուսումնական փորձերից։

ՀՐԱՑԱՆԻ ՄԱՍԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄԸ.— Վերցրեք վարժական հրացանը և քանդեք նրան. դըրեք գլխավոր մասերից մեկը և հարցրեք. «Սա ինչպես է կոչվում». յեթե վոչ վոք ճիշտ չի պատասխանի՝ ասացեք ինքներդ և իսկույն հիշյալ մասը անցկացրեք բոլորի ձեռներով՝ այն ժամանակ նրանք լավ կհիշեն։

Հրացանի բոլոր մասերի հետ վարվել այսպես. սկզբում վերցրեք միայն գլխավոր մասերը, մանրերի վրա մի կանգ առնի։ Յերբ հրացանի մասերը նորից ձեզ մոտ կհավաքվեն՝ հերթով ամեն մի մասը վեր բարձրացրեք և հարցրեք. «Ի՞նչ մաս է այս»։

Դարսեցեք հրացանի մասերը այնպես, վոր բոլորը տեսնեն, ապա դառնալով մեկ սովորողին հարցրեք. «Վո՞րտեղ է փակաղակը», վերցրեք և ցույց տվեք բոլորին։ Ուղղեցեք մյուսներին։ Նույնը արեք բոլոր սովորողների հետ։ Միաժամանակ բացատրեք, թե ինչու համար է ծառայում յուրաքանչյուր մասը։

Յերբ բոլոր գլխավոր մասերը կյուրացվեն՝ վերցրեք հրացանի վորևէ մեխանիզմը, որինակ փակաղակը և սկզբում կտրված, ապա վարժական հրացանի վրա ցույց տվեք, թե ինչպիսի նա աշխատում։ Ամբողջ ժամանակ, ցույց տալու հետ, պատմեցեք։ Հարակից հիշեցեք մանր մասերի անունները, վորոնք փակաղակի կազմի մեջ են մտնում։ Կատարեք այս դուք մեկ, յերկու անգամ, դանդաղ, վորպես զի բոլորը տեսնեն և կարողանան ձեզ հետևել։

Յեթե չեն հասկացել, կրկնեցեք նորից։

Ստիպեցեք սովորողներից 2—3-ին նույնը անելու։

Կանգնեցրեք նրանց յերեսով խմբին, վոր բոլորը տեսնեն, թե ինչ են անում նրանք, վորպեսզի կարողանան նրանց ուղղել։

Ջոկեցեք ավելի առաջադեմներին («իմ օգնականներ») և դրանով հետաքրքրություն և մրցակցություն զարթեցրեք մյուսների մեջ։

Կրկնեցեք փակաղակի աշխատանքը ավելի կարճ։

Նման ձևով սովորեցրեք և հրացանի մյուս մեխանիզմների-մասերի աշխատանքները։

Պարապմունքներից հետո պարզեցեք, թե այսօրվա պարապմունքներից ինչ է անհասկանալի մնացել և տվեք ձեր բացատրությունները։

## 2-րդ պարապմունք
## Հրացանի խնամքը

Հրացանի մասերի հավաքումն ու քանդումը, մաքրումն և յուղումն. պահելն ու պահպանելը, ու անկանոնությունները (անսարք լինելը)։

ՁԵՌՆԱՐԿՆԵՐ. Ժամանակավոր հրաձիգային

կանոնագրություն, մասն I. հրացան 1891 թ. տեսակի։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ.— Ընդհանուր ումերով ճշտությամբ սահմանեցեք հրացանի քանդելու (մասերի վերածելու) կարգը։ Լռությամբ քանդեցեք հրացանը՝ բաժանումներով։ Բաժանելով մասը, ասացեք, միայն «մեկ» և դրեք նրան իր տեղը մյուս մասը — «Յերկու» — և այլն...

Առաջարկեցեք մի քանի սովորողների, հերթով, անել նույնը, մյուսները ուղղում են, հրացանը առանձին մասերի վերածողի սխալները։

«Ինչու համար է պետք քանդելը»։ Չեն կասհի, մոտեցեք կողմնակի դիտողական հարցերով. «Չի ընկնում հրացանը հահախ անձրևի, փոշու տակ»։ Չի կեղտոտվում արդյոք նա դրանից. Ի՞նչ է լինում յերկաթը խոնավությունից։» Հետագայում բացատրեցեք, թե ինչպես հրացանը փչանում է կեղտից կրակելուց հետո, ինչպես նա այդպիսով կորցնում է իր լավ հատկությունները։ Բերեք գիտակցություն, որ հրացանի հետ անփույթ վարվելը դրանով ամենից առաջ իրեն և ինքնապինամթափ անում՝ օգնում թշնամուն։

Հաստատելով մաքրելու նշանակությունը՝ ծանոթացրեք հրացանը մաքրելու պարագաների հետ և ցույց տվեք, թե ինչպես մաքրել ամեն մի մաս։

Թող այդ անեն իրենք սովորողները։ Ցույց տվեք նույնպես յուղելը։ Հավաքեցեք բաժանումներով մի հրացան. ստիպեցեք նույնը անել 1—2 սովորողի։

Հարակից, պարապմունքների ընթացքում, կրկնեցեք մասերի անունները, սովորեցրեք պտուտակիչ ուղիղ օգտվելու հետ։



Սովորողներից ամեն մեկը, այդ պարապմունքներին, պետք է կատարի հրացանի վոչ լրիվ՝ քանդումն ու հավաքումը։

Հիշեցնելով հրացանի կանոնավոր պահելու և պահպանելու կարևորության մասին՝ տվեք հրացանի հետ վարվելու կանոններ։ Այս հարցի նվիրեցեք 1/4 պարապմունք։ Այս հարցի լավ բացատրումով դուք միանգամից սովորողների մեջ կդնեք սիրո սաղմեր դեպի իրենց զենքը։

Յեզրափակման մեջ ընդհանուր գծերով հիշեցրեք, թե հրացանի հետ անխնամ վարվելուց ինչ հետևանքներ են լինում և ընդհանրապես ինչ անճշտություններ են լինում հրացաններում։

**3-րդ պարապմունք**

**Գնդակի թռիչքը**

**Ի՞նչ է ձիգը ինչ է հեռաձիգը** (**տրայեկտորիան**)
**Ի՞նչ է ձիգերի խուրձը յեվ դիպման միջին կետը։**

**Ձեռնարկներ** ժամանակավոր հրաձգային կանոնագրություն, մասն II. **հավելված**։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ.— Վերցրեք կտրված փամփուշտը և բացատրեք նրա **կազմը**։ **Կտր**ված հրացանի (յեթե այդպիսին կա) և փամփուշտի վրա ցույց տվեք, թե ինչպես է առաջանում ձիգը թող սովորողները իրենք փորձեն բացատրել։

Հետագծի մասին գաղափար տալու համար՝ օգտվեցեք խոշոր քարի թռիչքով. ուշադրություն դարձրեք թռիչքի կոր գծին. նետեցեք քարեր տարբեր հեռավորության վրա և համեմատեցեք՝ ինչպես է թռչում քարը։

Ցույց տվեք փայտե գնդակի հետագիծը, վորը փետուրներ ունի, մոդելի թռիչքի վրա, ապա կազմեցեք հետագծի մասին ուղիղ հասկացողություն։ Ի՞նչ է հետագիծ։ Դրեք հրացանը պատին, պառկած դրությամբ և ցույց տվեք գնդակի թռիչքի գիծը (հրացանի փողից, պատի վրա, գծեցեք հետագիծը։ Մոդելի վրա ցույց տվեք հետագծերի խուրձեր, ցրման տարածությունը (մակարդակ) և դիպման միջին կետը։

Մտքերը պահելու վոչ մի թիվ միք տալ։ Գլխավորն այն է, վոր սովորողները ստանան դիպման միջին կետի, քարևորության մասին հասկացողություն։

**4-րդ պարապմունք**

**Հրաձգության պատրաստվելը**

**Կանգնած, ծնկի, պառկած, նստած յեվ հենարանից։**

**Ձեռնարկներ** *ժամանակավոր կանոնադրություն մաս* II. **Մեթոդական ցուցմունքներ** *թելադրող հարցերով. պարզաբանեցեք հենարանից կրակելու նշանակությունը։ Ցույց տվեք ինչպիսի չեն լինում նրանք։ Արագ պատրաստվեցեք կանգնած կրակելու։ Յերկրորդ անգամին դանդաղ բաժանումներով։*

*Առաջարկեցեք սովորողներից մեկին անելու նույնը. մյուսները ուղղում են։ Ցույց տվեք սխալները։*

*Առաջարկեցեք այդ անել կրկին սովորողներից 1—2-ին. ապա բոլոր սովորողներին առաջարկեք զույգ, զույգ փորձվել դրանում 5 րոպե. մեկը անում է, մյուսը ուղղում։*

*Կանգնեցրեք բոլորին մի շարք ձեր հրամանով*



*նույնը անելու (սկզբում բաժանումներով) վերջացնելով այդ անցեք հետևյալ ձևին՝ հրաձգություն ծնկից և այլն, միևնույն կարգով։*

*Պարապմունքների վերջին, ընդհանուր հրամանով, կատարեք արագորեն բոլոր ձևերը. ապա առաջարկեք իրենց սովորողներին փորձվել զույգ, զույգ մինչև պարապմունքի վերջը։*

*Յեզրափակման մեջ ցույց տվեք ճիշտ կրակի պատրաստվելու նշանակությունը (կարճ օրինակներ)*

**5-րդ պարապմունք։**

**Ինչպես լցնել յեվ դատարկել հրացանը հրացանի լեցնելը մեկ փամփուշտով ու պահունակով։ Հրահանը պահպանիչ վոտի վրա դնելը։ Դատարկելը։**

**Ձեռնարկներ** *ժամանակավոր հրաձիգային կանոնադրություն, մաս* II.։

*ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ.— Ցույց տվեք և բացատրեք, թե ինչպես է կատարվում հրացանի լեցնելը մեկ փամփուշտով՝ կանգնած դրությամբ։ Լեցնելը պահունակով։ Ինչպես են հրացանը դատարկում և դնում պահպանող վոտի վրա։*

*Տվեք դրանում փորձվեն բոլոր սովորողները։*

*Անցեք, ուրիշ դրությամբ, լցնելուն և դատարկելուն։ Կարգը նույնն է։ Արագ կատարելուն մի ձգտիր՝ մեկ պարապմունքով դրան հասնել անկարելի չէ։*

**6-րդ պարապմունք**

**Ինչպես ուղիղ նշան բռնել**

**Նշանոցի դնելը. ի՞նչ է հարթ նշանառության հասիկը։**

**Ձեռնարկ** *ժամանակավոր հրաձիգային կանոնադրություն մաս* II.։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ.— Սկզբում նշանոցը դրեք ատրճանների վրա, ապա հեռավոր տարածության վրա։ Ինչու պետք է փոփոխել նշանոցը (տես 3-րդ պարապմ.) ինչպես և փոխվում գնդակի թռիչքը տարբեր նշանոց դնելիս.

Ցույց տվեք կարգոնից շինած նշանառության հատիկի վրա՝ տարբեր հատիկներ։ Պահանջեցեք, որ սովորողները դրանք ցույց տան։ Պարզեցեք ճիշտ հատիկի նշանակությունը։

Պատմեցեք, ինչպես պետք է նշան բռնել։ Ձախլիկների համար։ Աչքի մարզանք։ Ամրացրեք հրացանը նշան առնելու հենարանին՝ փականակը հանելով և տեղը խարոց (դիաֆրագմա) դնելով։ Բռնեցեք հրացանը նշանին։ Հրամայեցեք բոլոր սովորողներին, հերթով, խարոցի անցքով նայել, թե ինչպես է յերևում հատիկը։

Յերրորդ անգամին ցույց տվեք առանց խարոցի։

Ամփոփեցեք արդյունքները. նշան առնելու հիմնականն է՝ վերցնել ուղիղ հատիկ։

## 7-րդ պարապմունք

### Ինչպես ճիշտ նշան բռնել

Կիրարկում, (պրիկլադկա) նշան բռնել հենարանի վրայով, ձեռքով և տարբեր դրությամբ։

ՁԵՌՆԱՐԿՆԵՐ.— Ժամանակավոր հրաձիգային կանոնադրություն, մասն II։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ.— Կազմակերպեցեք նշան բռնելու ուղղումն հենարանից՝ յեռանկյունիով—այդ կտա նշան բռնելու միատեսակություն։



Համընթաց՝ պարզեցեք գնդակի թռիչքում ինչ անճշտություններ են լինում՝ հրացանի անսարքությունից։

Նվիրեցեք դրան մեկ ժամ, յերկրորդ ժամին սովորեցրեք կիրարկումն և տարբեր դրությամբ նշան բռնելը։

Ուսուցման յեղանակը նույնն է։

Այդ պարապմունքի մեջ գլխավորն է վոչ թե արագություն ձեռք բերել, այլ ուղիղ—հատիկ վերցնել։

Փորձեցեք, որ ամեն ժամանակ սովորողները փոխադարձաբար ուղղեն միմյանց, սակայն վոչ մի ուղղումն մի՛ք թողներ ձեր վերջնական գնահատումից, վորպեսզի նրանցից ամեն մեկը հասկանա, թե ինքը ինչ սխալներ է արել և ինչպես է դրանք ուղղելու։

## 8-րդ պարապմունք

### Ի՞նչպես իջեցնել հրահանը

### Շնչառության պահելը. իջեցման սահունությունը

ՁԵՌՆԱՐԿՆԵՐ.—Ժամանակավոր հրաձգային կանոնադրություն, մասն II։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ.—Բավական չէ ուղիղ նշան բռնել, հարկավոր է գիտենալ և սահուն իջեցնել հրահանը։

Բացատրեք, թե ինչ հետևանքներ կարող են լինել հրահանի անկանոն իջեցումից։ Աշխատեցեք այդ իմանալ և գիտողական հարցերով։ Պատմեցեք, ինչպես պետք է հրահանը իջեցնել։ Ամրացրեք հրացանը հենարանին, բարձրացրեք հրահանը և ցույց տվեք ինչպես մատը վրան դնել, ինչպես պետք է նրան ծալել։

*Ցույց տվեք այս մի մասի վրա՝ առանց հրացանի։ Մեկ անգամ էլ կատարեք հրահանի իջեցումը պատարկ փամփուշտով լցված հրացանի վրա, որպեսզի բոլորը տեսնեն, թե ինչպես աննկատելիորեն հրահանի սահուն իջեցման ժամանակ՝ ձիգ է տեղի ունենում։ Հրամայեցեք սովորողներին (հերթով) ցույց տալ թե ինչպես են ծալելու ցուցամատերը։*

*Պարզեցեք ցուցամատի մարզման անհրաժեշտությունը։*

*Առաջարկեցեք բոլոր սովորողներին հերթով հենարանի վրա ամրացրած հրացանի հրահանը իջեցնել։ Յեթե որևե մեկին սահուն դուրս չի գալիս՝ ցույց տվեք պատճառները (շնչառությունը, մատը)։ Յեթե այդ ցուցմունքները քիչ են՝ դրեք ձեր մատը սովորողի մատի վրա և դանդաղ սղմելով նրան՝ սովորեցրեք հրահան իջեցնել։*

*Վերջում, ընդհանուր հրամանով, կատարեցեք ցուցամատի մարզանք և խորհուրդ տվեք այս հաճախակի անել՝ ամեն մի հարմար դեպքում։*

## 9-րդ և 10-րդ պարապմունքներ

### Ինչպես արագ կրակել

*Ավտոմատիզմի և արագության մշակումն կրակելու պատրաստ լինելու համար։ (Կիրարկումն և նշան բռնելը)*

*ՁԵՌՆԱՐԿ.—ժամանակավոր հրաձիգային կանոնադրություն, մասն II։*

*ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ.— Պարապմունքների նպատակն է, արագության և ավտոմատիզմի մշակումը։ Նրանք ձանձրալի չեն՝ հարկավոր է կենդանացնել։ Առաջուց անցած ձևերի կրկնման նվիրեցեք մեկ ժամից ոչ ավել։ Բացի ճշտությունից հիմա պահանջեցեք և կատարման արագություն։*



*Հիշեցրեք, որ կրակելու արագության կարելի յե հասնել արագ կրակի պատրաստվելով և նշան բռնելով և ոչ թե չափից դուրս հրահանի արագ իջեցում ու քաշումով։*

*Հետևյալ ժամերին խմբին դաշտ հանեցեք։*

*Հրաման տվեք, ցույց տվեք նշանը, տարածությունը և կրակելու դրությունը։ Առաջարկեցեք որոշել նշանոցը, և կրակել վարժական փամփուշտով։ Միևնույն խնդիրը առաջարկեք մի քանիսներին։ «Ով արագ նշան կբռնի», բայց չի կրակում—մրցակցության ոգտակար տարրը չպետք է ստեղծի «օդը կրակելու» վատ սովորությունները։*

*Այստեղ ասացեք, ինչու համար պետք է ունենալ « Ամուր ձեռք», որը ձեռք է բերվում հրացանով մարզանք անելով։ Ցույց տվեք այդ մարզանքի ամենագործածական ձևերը և առաջարկեք անել այդ տանը։*

*Հրացան չունենալու փոխարեն, դրա համար, վերցնել մի փայտե ձող, որը, ծանրությամբ և յերկարությամբ, մոտավորապես հավասար լինի հրացանին։*

## 11-րդ պարապմունք

### Ինչպես աչքով տարածությունը որոշել

*Սովորեցնել, 600 քայլի շրջանում, տարածությունը որոշել աչքաչափով։*

*ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ.—Դուրս բերեք խմբակը դաշտ։ Բացատրեք, որ շեշտակի կարելի յե*

խփել միայն ճիշտ նշանոց դնելու դեպքում, իսկ տարածությունը պետք է հաշվել քայլերով։

Գործնական հարցերով բերեք յեզրակացության, վոր շատ քիչ է հարկավորվում հրաձիգին տարածությունը վորոշել վոտներով՝ շատ հաճախ այդ արվում է աչքաչափով։

Տարեք սովորողներներին դիտարանի վրա, վորտեղ առաջուց ճառագայթանման նշված են 2—3 առարկա 600 քայլ հեռավորությամբ, յուրաքանչյուր 100 քայլից հետո ցցեք նշանաձողեր։

Բոլոր պարապմունքները առանձնապես պետք է կատարել «պառկած» կամ «ծնկի». առաջարկելով բոլորին նայել և հիշել 100 քայլ մոտ տարածությունը։ Ապա առաջարկեցեք նայել 600 քայլ տարածության վրա և տեսնել նշանաձողերով, թե ինչպես այդ 100 քայլի չափը դիտողից աստիճանաբար հեռանալով, կարծես թե պակասում է։

Առաջարկեցեք, վորևե մեկին, վորոշել տարածությունը մինչ վորևե տեղական առարկա ձեր առաջուց նշած մեկ տարածության համեմատությամբ։ Հարցրեք մնացածների կարծիքը։

Մտցրեք ձեր ուղղումները և բացատրեք, ինչումն էր սխալը։ Առաջարկեցեք վորևե մեկին, մինչև նշանը տարածությունը չափել քայլերով։ Մյուսների հետ, այդ ժամանախամիջոցում, փորձել վորոշել տարածությունններ — մինչ ուրիշ առարկաներ։

Զարթեցրեք նրանց մեջ մրցման ցանկություն։

Պարապմունքների վերջում տվեք ձեր յեզրափակումը։

1) 100 քայլի տարածությունը դիտողից հեռանալով կարծես փոքրանում է։ Պետք է լավ հիշել, ինչպես է յերևում 100 քայլ չափը զանազան տարածության վրա.

2) Մանր առարկաները թվում են հեռու, քան մեծը։

3) Տեղի գույնն ու ֆոնը նույնպես փոխվում են առարկայի թվացող հեռացումը։

Յեզրափակման մեջ հիշեցրեք, վոր առանց մշտական փորձառության վոչ վոք, վոչ մի անգամ չի կարողանա սովորել ճշտությամբ վորոշել տարածությունը աչքի չափով։ Այս պետք է անել, վորքան հնարավոր է շուտ, շուտ՝ առօրյա կյանքում՝ օգտվելով ամեն մի ազատ ժամանակից։ Ցույց տվեք, վոր այդ փորձի համար առանց առանձնակի ժամանակ կորցնելու՝ կարելի յե այդ համընթաց ձեռք բերել. (գյուղ գնալիս և այլն։)։

Առաջարկեցեք յուրաքանչյուրին նկատել, թե ինչքան տարածության վրա նա տեսնում է մանրամասնությունները՝ տարբեր ֆիգուրաներ դեմքերի, շարժումներ, տարբերում է ճյուղեր, թմբեր և այլն...։

1003
13592



**12-րդ պարապմունք**

**Ինչպես կուտակված կրակել**

Շեշմայի կրակումով հասնել կրակելու միակերպության։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ.—կանգնեցրեք մի տախտակամած, ամրացրեք վրան նշանառման սև կետ ունեցող մի թուղթ, վորի տրամագիծը հավասար է 1/1000 տարածության՝ մինչև նշանը։ Հիշեցրեք,

որ կուտակման կարելի չէ հասնել միատեսակ նշան բռնելով և հրահանգի սահուն իջեցումով։ Բացատրեք պայմանները։

Ճեչման կրակելը կատարվում է պառկած հենարանից, 10 մետր տարածությունից։ Ամեն մեկը, հերթով, իրար հետև թողնում է հինգ ճեչմա։ Կրակելուց հետո չափեցեք տվյալ սովորողի հարվածների (դիպածների) կուտակումը չորս բոլորից 5—7 սանտիմետր տրամագիծ ունեցող շրջագծի վրա, պայմանը կատարող համարվում է նա, որի նշանի մեջ 5 ճեչմաներից չորսը մտնում են յերկաթալարի շրջանի մեջ։

Պայմանները կատարողներին առաջարկեցեք մեկ անգամ ել փորձել ուժերը, բայց արդեն ավելի ծանր պայմաններում։ Նշանն նույնն է, բայց տարածությունը հասցրած է 15 մետրի (դիպչելու գնահատման շրջանը—պետք ելինի 7—10 սանտիմետր տրամագծով)։

Յետ մնացողների հետ լրացուցիչ կերպով պարապեցեք և պարզեցեք նրանց գնդակների ցրման պատճառները։ Ստիպեցեք նրանց նորից կրակել։ Զգուշացեք, որ իրենց առաջին կրակումը կատարեն բավարար։ Յեթե հրաձիգը կորցնի իր հավատը իր ուժերի ու կարողության նկատմամբ՝ այդ պարագայում կը զրկի նրան հրաձիգային գործի ամեն մի հետաքրքրությունից։

### 13-րդ պարապմունք

### Ինչպես ճշտակի կրակել

ՆՊԱՏԱԿ.— Սովորեցնել ճշտակի կրակել, այսինքն խմբված հարվածել նշանի կենտրոնին՝ տեղափոխելով նշանառման կետը ըստ դիպչելու արդյունքի,



ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ.—Հիշեցրեք դիպման միջին կետի և նշանառման կետի մասին և պատմեցեք, ինչպես իր կրակումների հետևանքների դիտողություն կատարել, ինչպես փոխել նշանառման կետը դիտողության համեմատությամբ։

Վերցրեք շրջաններով մի նշան (№ 5) կանգնեցրեք նրան կրակի գծից 10 մետրի վրա. Թույլ տվեք հրաձիգին յերեք փորձնական կրակ բաց անելու։ Ամեն մի կրակումից հետո ցույց տվեք նրան՝ նրա խփված տեղերը։

Թող հրաձիգը ինքնուրույն կերպով փոխի նշանառության կետը, յեթե այդ պետք է։ Յեթե հրաձիգը յերեք ճեչմայով կարողանում է իր նշանառության միջին կետը որոշել՝ տվեք նորից յերեք ճեչմա և օգնեցեք։

Հետևյալ հինգ ձիգեր հրաձիգը անելու է մեկը մյուսի յետևից առանց ցույց տալու, ամեն մի կրակումից հետո, հետևանքները։

Պայմանները իրագործողը համարվում է 10 նիշ տանողը։

### 14-րդ պարապմունք

### Ինչպես կրակել անկանոն խփվածք (զարկ) ունեցող հրացանից

ՆՊԱՏԱԿԸ.—Գործնականորեն ցույց տալ ինչ նշանակություն ունի հրացանի անսարք լինելը՝ նրա ճիշտ հարվածի համար։

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ.—Տվեք, գիտությամբ, անճիշտ հարվածով հրացաններ. համարության դեպքում նշանառման հատիկը (մուշկան) շար-

ժեցեք մի կողմ: բայց այդ մասին հրաձիգներին վոչինչ միք ասիլ: Նշանները և տարածությունները նույնն են, ինչպես 12-րդ պարապմունքում:

Տվեք յուրաքանչյուր հրաձիգին յերեք փորձնական կրակումներ անել: Ամեն մեկից հետո—ցույց տալ:

Ասացեք յուրաքանչյուր հրացանի անհիշտ հարվածի մասին և հրաձիգների հետ միասին պարզեցեք, թե նշանառման ինչ կետ պիտի ընտրել: Վորից հետո հրաձիգը թող, իրար յետևից, բաց թողնի հինգ շիչմա. Սև շրջանում յերկու գնդակ խփողը համարվում է պայմանը կատարած:

Չկարողացողներին հնարավորություն տվեք վերակրակել:

### 15-րդ պարապմունք

### Մենամարտային հրաձգություն

ՆՊԱՏԱԿ.—Ցույց տալ, վոր շտապովի կրակումը հասցնում է վատ հետևանքների:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ. Ցեթե ձեր խմբակում, յենթադրենք թե 8 հոգի յե՝ կարգավորեք այսպես. ամենից առաջ բաժնեք յերկու կողմերի՝ կարմիր և կապույտ—հավասար (4-ական մարդ): Յուրաքանչյուր կողմը բաժնեցեք 3 խմբակի (գրուպպայի), մոտավորապես այսպես. կարմիր կողմը—խմբակ №1—2 թույլ հրաձիգ, № 2 և № 3՝ մեկական ուժեղ հրաձիգ: Կապույտ կողմը—խմբակ № 4 և № 5՝ մեկական ուժեղ հրաձիգ և № 6—2 թույլ:

Յուրաքանչյուր հրաձիգի դիմաց կանգնեցրեք



ընկնող նշաններ՝ վորը այդ հրացիդն է պատկերացնում:

Կրակելու համար դրություւններ ըստ հրաձիգի ընտրման:

Փամփուշտների քանակն ու ժամանակը—անսահման:

Յուրաքանչյուր խմբակ կրակում է այնքան, մինչև վոր տապալի իր թշնամու նշանները կամ մինչև յուր նշանի վայր գցելը:

Հետևեցեք վերջի կանոնի կատարման:

Տանող համարվում է նա, ով առաջուց վայր կը գցի հակառակորդի նշանը:

ՀՀ Ազգային գրադարան
NL0211156

42.159